

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Եթե ճամփորդել եք կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 անապահով երկիր կամ կարծում եք, որ սերտ շփում եք ունեցել կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 հաստատված դեպքի հետ, ապա Ձեր նկատմամբ կիրառելի են հատուկ սահմանափակումներ:

Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 անապահով երկրների ցանկին կարող եք ծանոթանալ՝ www.who.int հղմամբ

Կարո՞ղ եմ արդյոք գնալ աշխատանքի

Հյուրանոցային անձնակազմը չի կարող աշխատել հյուրանոցում, եթե նրանք.

- Ժամանել են կամ տարանցիկ անցել են կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 անապահով երկրից: Այս դեպքում իրականացվում է 14 օրյա ինքնամեկուսացում ԿԱՄ
- Վերջին 14 օրվա ընթացքում սերտ շփում են ունեցել կորոնավիրուսային հիվանդության COVID-19 հաստատված դեպքի հետ: Այս դեպքում նրանք մեկուսացվում են 14 օրով՝ հաստատված դեպքի հետ վերջին շփումից հետո
- Եթե Ձեզ մոտ, կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 անապահով երկրից վերադառնալուց հետո 14 օրվա ընթացքում, ի հայտ են եկել ախտանշաններ (ստորև ներկայացված), ապա անհապաղ դիմեք բժշկի՝ տրամադրելով մանրամասն տեղեկատվություն այցելության և շփման մասին

Բժիշկը կապ է հաստատում հանրային առողջապահական համապատասխան մարմնի հետ՝ հոսպիտալացման և մեկուսացման գործընթացը կազմակերպելու համար: Մեկուսացումն իրականացվում է հյուրանոցում, տանը կամ բժշկական կազմակերպությունում՝ մինչև համապատասխան որոշման ընդունումը

Ես գործատու եմ. Ի՞նչ ասեմ իմ անձնակազմին

- Հյուրանոցի ղեկավարությունը պետք է բոլոր աշխատակիցներին և պայմանագրային աշխատողներին, ներառյալ մաքրող անձնակազմին, համապատասխան տեղեկատվություն տրամադրի և համառոտ ներկայացնի տեղեկատվությունը և ընթացակարգերը՝ հյուրանոցի տարածքում մարդկանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության COVID-19 տարածումը կանխելու համար:
- Նրանք մեկուսացվում են տնային պայմաններում:
- Աշխատակիցները պետք է իրենց գործատուին տեղեկացնեն մեկուսացման ժամանակ ի հայտ եկող ախտանշանների մասին, մասնավորապես՝ եթե այդ պահին նրանք եղել են աշխատավայրում:

Ի՞նչ է վիրուսը

Կորոնավիրուսները կարող են առաջացնել ինչպես թեթև (սուր շնչառական վարակ, հարբուխ), այնպես էլ ծանր ընթացքով հիվանդություններ, օրինակ՝ Ծանր սուր շնչառական համախտանիշ (SARS) և Մերձավոր Արևելքի շնչառական համախտանիշ (MERS): Վիրուսը կոչվում է «Նոր», քանի որ այն նոր է հայտնաբերվել: Հավանական է, որ վիրուսն ունի կենդանական ծագում, և այժմ կան ապացույցներ, որ այն կարող է փոխանցվել մարդուց մարդ:

Որո՞նք են ախտանշանները

Ախտանշանները ներառում են (բայց չեն սահմանափակվում) բարձր ջերմություն/ տենդ, հազ, կոկորդի ցավ, թուլություն և դժվարացած շնչառություն:

Ինչպե՞ս է տարածվում վիրուսը

Վիրուսը տարածվում է մարդուց մարդ:

- Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 հիվանդի հետ սերտ շփման արդյունքում
- Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 հաստատված հիվանդի հազալու կամ փռշտալու հետևանքով առաջացած կաթիլի հետ շփման ուղիով, կամ
- Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 հիվանդի հազալու կամ փռշտալու հետևանքով առաջացած կաթիլներով աղտոտված մակերեսներին կամ առարկաներին (օրինակ՝ դռան բռնակներ կամ սեղաններ) դիպչելու, այնուհետև՝ բերանին կամ դեմքին դիպչելու հետևանքով

Որքա՞ն ժամանակ անձը կարող է լինել վարակիչ այլոց համար

Դեռևս վարակված անձի վարակիչ լինելու շրջանը անհայտ է: Հավանական է, որ անձը կարող է փոխանցել վարակը նախքան առաջին ախտանշանների ի հայտ գալը, մինչև մեկ օր՝ ախտանիշների բացակայությունից հետո:

Այդ իսկ պատճառով, Առողջապահության նախարարությունը ներկայումս առաջարկում է 14 օրվա մեկուսացում՝ Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 անապահով երկրներից վերադարձած ճանախարհորդների և Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19 հաստատված դեպքի հետ սերտ շփում ունեցած անձանց համար:

Ովքե՞ր են գտնվում ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում

Վարակված անձանց մի մասը կարող են չունենալ որևէ ախտանշան, մի մասի մոտ այն կարող է ընթանա շատ մեղմ և նրանք կարող են հեշտությամբ ապաքինվել: Մյուս մասի մոտ կարող է ընթանալ շատ ծանր և կայծակնային:

Հիվանդության ծանր զարգացման ռիսկի խմբում են գտնվում.

- Թույլ իմունային համակարգ ունեցող անձինք (օր.՝ քաղցկեղ)
- Մեծահասակներ՝ 70 տարեկան և բարձր
- Քրոնիկ հիվանդություններով անձինք

- Մանկահասակ երեխաներ և նորածիններ*
- Խիտ բնակեցմամբ տարածքում գտնվող անձինք
- Կալանավայրերում գտնվող անձինք

** Երեխաների և նորածինների ռիսկը, ինչպես նաև նրանց դերը COVID-19- ի փոխանցման մեջ, պարզ չէ: Այնուամենայնիվ, մինչ այժմ արձանագրվել է հաստատված COVID-19 դեպքերի ցածր ցուցանիշ երեխաների շրջանում՝ համեմատած լայն բնակչության հետ*

Ի՞նչ էթե արդեն վերադարձել եմ աշխատանքի, բայց պետք է լինեի մեկուսացված

Հնարավորինս շուտ պետք է տեղեկացնել գործատուին այն մասին, որ ճամփորդել եք բարձր ռիսկային երկիր կամ սերտ շփում եք ունեցել հաստատված դեպքի հետ և մեկուսացված մնալ մնացած 14 օրվա ընթացքում

Եթե զարգանում են ախտանշաններ.

- Անմիջապես մեկուսացվել տան մյուս անդամներից,
- Չանգահարել բժշկի կամ տեղամասային պոլիկլինիկա և տեղեկացնել նրանց այն մասին, որ դուք կարող եք վարակված լինել կորոնավիրուսային վարակով, և
- Բժշկին կամ հիվանդանոց այցելության ժամանակ, տեղեկացրեք, որ կարող եք վարակված լինել կորոնավիրուսային վարակով, ԵՎ
- Հնարավորինս շուտ տեղեկացրեք Ձեր գործատուին առկա ախտանշանների և նոր կորոնավիրուսային վարակի նկատմամբ թեստավորման մասին

Եթե առկա է ծանր ախտանշաններ, ինչպես օրինակ՝ դժվարացած շնչառություն.

- Չանգահարեք **8003, 060838300** և հրավիրեք շտապ օգնություն,
- Տեղեկացրեք շտապ օգնության անձնակազմին այն մասին, որ դուք կարող եք վարակված լինել Կորոնավիրուսային հիվանդությամբ COVID-19:

Բժիշկը կապ է հաստատում հանային առողջապահական համապատասխան մարմնի հետ՝ հոսպիտալացման և մեկուսացման գործընթացը կազմակերպելու համար: Հանրային առողջապահության մարմնի ներկայացուցիչներն ավելի մանրամասն տեղեկատվություն կներկայացնեն և կհամագործակցեն ձեր գործատուի հետ

Ինչպե՞ս կարող եմ օգնել վիրուսի տարածումը կանխարգելելու հարցում

Ձեռքերի, ինչպես նաև փռշտալու և հագալու հիգիենայի պահպանումը չվարակվելու լավագույն միջոցն է: Անհրաժեշտ է.

- Կազմակերպությունն ապահովել անհրաժեշտ քանակի ձեռքերի լվացման և ախտահանման միջոցներով:
- Հաճախակի լվանալ ձեռքերը օձառով և ջրով, նախքան ուտելը, ուտելուց հետո, սանհանգույց հաճախելուց հետո
- Հազալիս և փռշտալիս փակել բերանը և քիթը անձեռոցիկով, այնուհետև զգել այն աղբամանը, օգտագործել ակոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ
- Եթե ձեռքերը տեսանելի ախտոտված չեն, օգտագործել ակոհոլ պարունակող ախտահանիչ, եթե ձեռքերը տեսանելի աղտոտված են՝ անհրաժեշտ է լվանալ ձեռքերը օձառով և ջրով:

- Վատառողջ լինելու դեպքում՝ մեկուսացվել շրջապատից (պահպանել առնվազն 1 մետր հեռավորություն);
- Մինչ բժշկական կազմակերպություն տեղափոխելը մեկուսացված այցելուի սննդի և այլ անհրաժեշտ ծառայությունները ապահովել տեղում՝ համարում, բացառելով շփումը:
- Առանց ախտանշանների անձանց համար բժշկական դիմակ չի պահանջվում, դիմակը անհրաժեշտ է օգտագործել միայն կասկածելի անձին ծառայություն մատուցելու դեպքում՝ սննդի տրամադրում, առաջնային բժշկական օգնություն և սպասարկում և այլ:
- Շրջակա միջավայրի մաքրման և ախտահանման ընթացակարգերը պետք է հետևողականորեն իրականացվեն:
- Հաճախակի մաքրել և ախտահանել մակերեսները, ինչպիսիք են անկողնու հարևանությամբ գտնվող սեղանները, մահճակալները և ննջասենյակի այլ կահույքը յուրաքանչյուր օր սովորական կենցաղային ախտահանիչով, որը պարունակում է փոշիացված սպիտակեցնող լուծույթ (1 մասը՝ 99 մասի ջրով): Այն մակերեսների համար, որոնց վրա չի թույլատրվում սպիտակեցնող նյութերի կիրառում՝ կարող է օգտագործվել 70% էթանոլ,
- Լոգարանի և սանհանգույցի մակերեսները մաքրել և ախտահանել առնվազն օրական մեկ անգամ՝ կենցաղային սովորական ախտահանիչով, որը պարունակում է փոշիացված սպիտակեցնող լուծույթ (1 մասը՝ 99 մաս ջուր),
- Հագուստ, անկողնային սպիտակեղեն, բաղնիքի և ձեռքի սրբիչներ և այլն օգտագործելուց հետո կանոնավոր լվանալ օձառով և ջրով կամ մեքենայով՝ 60-90 ° C ջերմաստիճանում՝ սովորական լվացքի փոշիով և մանրակրկիտ չորացնելով:
- Յուրաքանչյուր հիվանդության կասկածով այցելուից հետո անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել եզրափակիչ ախտահանում:

Կարո՞ղ են հյուրանոցի պատվավոր հյուրերը Կորոնավիրուսային հիվանդության COVID-19 ներկրման պատճառ դառնալ

Այո, չի բացառվում: Հետևաբար՝ հյուրանոցը պատվավոր է հյուրերին տրամադրելու տեղեկատվություն հյուրանոցում առկա իրավիճակի մասին՝ հյուրանոցում տարածումը կանխելու նպատակով:

Ի՞նչ էթե կարիք կա հյուրանոցի պատվավոր հյուրերին մեկուսացնել

Եթե անհրաժեշտություն է առաջացել հյուրանոցի պատվավոր հյուրերին հյուրանոցում մեկուսացնելու, ապա հյուրանոցի անձնակազմի կողմից ձեռնարկվում են նախազգուշական միջոցներ՝ վիրուսի տարածումը կանխելու համար: Աշխատակազմը խստորեն իրականացնում է բոլոր նախազգուշական միջոցառումները, ինչպես նաև պետք է խուսափեն նրանց հետ սերտ շփումից:

Ապահո՞վ են արդյոք մաքրման աշխատանքները

- Մաքրող անձնակազմի կողմից բացառվում է մեկուսացված հյուրերի հետ սերտ շփումը:
- Մաքրելու ընթացքում անհրաժեշտ է կրել ձեռնոցներ, իսկ ձեռնոցներ օգտագործելուց առաջ և հետո լ ձեռքերը պետք է լվանալ և ախտահանել ալկոհոլային հիմքով ախտահանիչով: Մաքրող անձնակազմը կարող է սենյակը մաքրելիս կրել եռաշերտ վիրաբուժական դիմակ (լրացուցիչ նախազգուշական միջոցառում):

➤ Նախքան սենյակ մտնելը, մաքրող անձնակազմը կարող է տեղեկանալ հյուրերի ինքնազգացողության մասին, և ախտանշանների առկայության դեպքում խնդրել, որպեսզի նրանք կրեն եռաշերտ վիրաբուժական դիմակ:

Ի՞նչ եթե հյուրը հիվանդանա

Եթե մեկուսացված հյուրի մոտ զարգանում են ախտանշաններ, ապա անհապաղ պետք կապ հաստատել բժշկի հետ, ով դրա մասին հայտնում է Առողջապահության նախարարությանը՝ **8003, 060838300 հեռախոսահամարով:**

Բացառվում է անաձնակազմի շփումը վատ ինքնազգացողություն ունեցող և բժշկին դիմած հյուրերի հետ:

➤ Կազմել հիվանդ այցելուի հետ շփված բոլոր անձանց ցանկը՝ ինչպես աշխատակիցների, այնպես էլ հյուրերի, և տրամադրել բուժաշխատողին

➤ Մինչ բժշկական կազմակերպություն տեղափոխելը մեկուսացված այցելուի սննդի և այլ անհրաժեշտ ծառայությունները ապահովել տեղում՝ համարում, բացառելով շփումը:

➤ Յուրաքանչյուր հիվանդ այցելուից հետո անհրաժեշտ է կազմակերպել և իրականացնել եզրափակիչ ախտահանում: